# ՋՈ ԲԱՅԴԵՆ

Evan Osnos

# JOE BIDEN

## The Life, the Run, and What Matters Now

Bookmark

Էվան Օզնոս

# ՋՈ ԲԱՅԴԵՆ

## Կյանքը, կարիերան և ամենակարևորը

Թարգմանությունն անգլերենից՝
Դավիթ Սարգսյանի

ԵՐԵՎԱՆ
2021

Bookmark

## ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

The New Yorker-ի տաղանդավոր թղթակիցը Ջո Բայդենին ներկայացնում է որպես մարդու և քաղաքական գործչի: Մեր առջև է նախագահի թեկնածուն, որին անսպասելիորեն առաջադրել է Դեմոկրատական կուսակցությունը:

***The Washington Post***

Գիրքը բացահայտում է նախագահ Բայդենի ուղին դեպի Սպիտակ տուն՝ միաժամանակ ուրվագծելով Բայդենի նախագահության նշանակությունը երկրի համար:

***Rolling Stone***

Կենսագրական մանրակրկիտ ուսումնասիրություն. հեղինա- կը ներկայացնում է New Yorker պարբերականին հատուկ վառ նկարագրություն և խորաթափանց վերլուծություն: Խելացի և հուզումնառատ գործչի դիմանկար է:

***Publishers Weekly***

ԱՄՆ կառավարության ամենակարևոր դեմքերից մեկին գնահատելու պատկառելի հիմք է:

***Booklist***

Էվան Օզնոսի հակիրճ, բայց համապարփակ ու գրավիչ այս գիրքն ավելի ամրապնդեց Դեմոկրատական կուսակ- ցության առաջադրած թեկնածուի հանդեպ իմ դրական վերաբերմունքը:

***Max Boot, The Washington Post***

Bookmark

Երկար տարիներ լուսաբանելով Բայդենի գործունեությունը The New Yorker-ում՝ Օզնո-սը- ներկա-յաց-նում- է նախկին- փոխ-նախագահի կյանքի հարուստ պատմությունը:

***The National Book Review***

Անհնար է անտարբեր անցնել Օզնոսի ներկայացրած կեն-սագրականի կողքով: Այն ստիպում է ակնածանքով վերաբեր-վել Բայդենի անցած ուղուն: Նա, իրոք, շատ դժվարություններ է հաղթահարել իր այսօրվա դիրքին հասնելու ճանապարհին:

***The Guardian***

Էվան Օզնոսը ցույց է տալիս, թե Դեմոկրատական կուսակ-ցության թեկնածուն ինչո՞ւ ծնկի չեկավ նախագահական ընտ-րապայքարում ընդունված տրամաբանության առջև:

***Financial Times***

Այս կենսագրականը ներկայացնում է նախագահի թեկնա- ծուի կարիերան՝ սենատոր, փոխնախագահի և նախագահի թեկնածու:

***The New York Times Book Review***

Էվան- Օզնո-սը- ցույց է տալիս,- թե փորձութ-յուն-ներն- ու դժվա- րությունները Բայդենի հոգում ինչպես են ձևավորել կարեկ- ցելու արտասովոր կարողությունը: Նախագահը ներկայա- նում է որպես բացառիկ մարդ, որն արժանի է Ամերիկան առաջնորդելուն հատկապես մարտահրավերներով լի առա- ջիկա 4 տարիներին:

***Detroit Free Press***

ՀՏԴ 32:929
ԳՄԴ 66+63.3-8
O- 276

O-276 Օզնոս Էվան / Ջո Բայդեն: Կյանքը, կարիերան և ամենակարևորը Էվան Օզնոս; Թարգմանությունն անգլերենից Դ. Սարգսյանի.- Եր.: Newmag, 2021.- 216 էջ:

Նախագահ Ջոզեֆ Ռ. Բայդեն Կրտսերին անվանում են և՛ խիստ բախտավոր, և՛ խիստ անբախտ մարդ: Նա 50 տարի շարունակ քաղաքական կայուն կարիերա է արել և հասել է Սպիտակ տուն: Միաժամանակ այդ վերելքն ուղեկցվել է անձնական ծանր կորուստներով, հիասթափություններով ու տառապանքով:

Հայտնի լրագրող Էվան Օզնոսը միաձուլում է բարձրակարգ լրագրությունն ու ավելի ընդարձակ կոնտեքստը: Նա ներկայացնում է նախագահի՝ 2020 թվականի արտասովոր ընտրության բնույթն ու նշանակությունը: Գիրքը հիմնված է հեղինակի ծավալուն հարցազրույցների վրա: Հեղի-նակը- սերտ շփվել է Բայդե-նի- ու նրա ըն-տանիքի անդամների հետ: Նրա զրուցակիցներն են եղել նախագահ Բարաք Օբա-ման, Քորի Բուքերը, Էմի Կլոբուշարը, Փիթ Բութիգիեգը և բազում ակտիվիստներ, խորհրդականներ, ընդդիմադիրներ. ավելի քան 100 մարդ:

Այս գիրք-դիմանկարը լույս է սփռում Բայդենի երկար ու իրադարձություններով հարուստ կարիերայի վրա: Բայդենը Սենատում է, հետո, որպես Օբամայի փոխ- նախագահ, 8 տարի Սպիտակ տանն է: Նախագահական մրցավազքը Հիլարի Քլինթոնին զիջելուց հետո Բայդենը հաղթահարում է քաղաքական ամայությունը, Դոնալդ Թրամփին ծեռնոց նետելու և Քամալա Հարիսին փոխնախագահ նշանա- կելու որոշում է կայացնում:

Այս երանգավորված դիմանկարում հեղինակը Բայդենին ներկայացնում է իր թերություններով ու վճռականությամբ: Բայդենը ներկայանում է որպես ողբերգութ-յունների ու տառապանքների միջով անցած մի մարդ, որն այս պատմական ժամա-նակահատվածում զարմանալիորեն համապատասխանում է իր պաշտոնին:

ՀՏԴ 32:929
ԳՄԴ 66+63.3-8

ISBN 978-9939-884-34-9
Copyright © 2020 by Evan Osnos
Armenian Translation © 2021 by Newmag Publishing House
Էվան Օզնոս «Ջո Բայդեն. կյանքը, կարիերան և ամենակարևորը» ©
2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել հեղինակի հետ կնքված պայմանագրով:

Բովանդակություն


| | | |
|---|---|---|
| | **Նախաբան** | 13 |
| *Գլուխ 1* | **Annus horribilis** | 17 |
| *Գլուխ 2* | **Ինչ գնով դա եղավ-** | 37 |
| *Գլուխ 3* | **«Մեծացի՛ր»** | 57 |
| *Գլուխ 4* | **Փոխնախագահ** | 77 |
| *Գլուխ 5* | **Բանագնաց** | 97 |
| *Գլուխ 6* | **Բախտավորն ու անբախտը** | 123 |
| *Գլուխ 7* | **Պայքար հոգու համար** | 145 |
| *Գլուխ 8* | **Պլանավորելով նախագահությունը** | 173 |
| | **Երախտագիտության խոսք** | 201 |
| | **Աղբյուրների մասին** | 203 |


Bookmark

*Մորս՝ Սյուզանին, որն ինձ սովորեցրեց կարդալ:*

*Հորս՝ Փիթերին, որն ինձ սովորեցրեց գրել:*

Bookmark

*Մարդը վճարում է իր արածի համար: Առավել ևս՝ կայացման համար: Հասարակ վճարում է դա՝ նրա հետևորդների կյանքի գնով:* Ջեյմս Բոլդուին, «Անանուն փողոց»

*Իսկ ես կապված- եմ հրե անի-վին,- Եվ իմ սեփական արցունքները ինձ Այրում են հալած կապարի նման*:*
Շեքսպիր, «Լիր Արքա»

* Հայերեն թարգմանությունը՝ Հովհաննես Մասեհյանի, 1898, Թիֆլիս, խմբագիր՝ Եղիշե Չարենց, 1934, Երևան: ԳԱԹ, 2006, Երևան, 185: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Bookmark

# Նախաբան

*Փետրվարի 12, 1988*

Սպիտակամորթ տղամարդն արթնացել էր: Հյուրանոցի իր համա-րում- էր, հատա-կին:- 45 տարե-կան- էր, 3 երե--խա-նե-րի հայր: 5 ժամ ան-գի-տա-կից էր ե-ղել: Հա-զիվ էր կա-րողանում շարժել ոտքերը: Չգիտեր, թե ինչպես է այդտեղ հայտնվել: Հիշում էր միայն ակնթարթային ուժեղ ցավը. նա ելույթ էր ունեցել Նյու Յորք նահանգի Ռոչեստեր քաղաքում, հետո վերադարձել էր իր սենյակ, որտեղ և այնպիսի զգա-ցողություն էր ունեցել, կարծես չափաջաղով կիսել էին գլու- խը: Ամիս-ներ- շարու-նակ- նա անտե-սում- էր գլխի ու վզի ցավը,- բթացնում ցավազրկող հաբերով: Կարծում էր, թե նախա-գահական ընտրապայքարի՝ անհեթեթության հասնող ծան-րաբեռնվածությունն էր պատճառը, որին գումարվում էր իր հիմնական աշխատանքը՝ ԱՄՆ Սենատի Պետաիրավական հանձնաժողովի ղեկավարի գործը: Ընտրարշավը տանում էր տրված, ինչը, իր իսկ խոստո-վա-նութ-յամբ,- իր մեծամ-տութ--յան հետ-ևանքն էր: Ա-մեն ինչ ա-վարտ-վել էր, բայց գլխա-ցա-վը շարունակվում էր:

Նա գամվել էր անկողնուն: Օգնականը նրան օդանավով տեղափոխել էր Դելավեր, որտեղ բժիշկներն ախտորոշել էին ուղեղի անոթների անևրիզմ՝ ուղեղը սնուցող զարկե- րակի- փքում: Ողջ մնալու- հեռան-կարն- այնքան- մշուշոտ- էր, որ քա-հանա-յին- կան-չել էին ա-վելի- շուտ, քան տեղ էր հա-սել նրա կինը:- Հետա-գա- մի քանի- ժամե-րին- նրան ծնաբքի- պայ- մաններում շտապ տեղափոխել էին մայրաքաղաք Վաշինգ- տոն: Բժիշկը զգուշացրել էր, որ վիրահատությունը կարող է ավարտվել խոսելու կարողության կորստով: Տղամարդը պա- տասխանել էր. «Կուզեի, որ դա անցած ամառ լիներ»:

Լրացուցիչ վիրահատություններից, հավելյալ բարդություն- ներից երեք ամիս հետո, նա պառկած էր հիվանդանոցային մահճակալին: Տարօրինակ է, բայց նախագահական ընտրա- պայքա-րում- նրա ձախո-ղու-մը- փրկել էր նրա կյանքը:- Եթե- նա մրցապայ-քա-րից- դուրս չմնար, շրջեր Ն-յու Հեմշիրում և-ար- համարիեր հիվանդության նախանշանները, գուցե հիվան- դանոց էլ չհասներ: Իր չարչարանքների գագաթնակետին մի բժիշկ մոտե-ցել- էր նրան ու ասել,- որ նա բախտա-վոր- մարդ է: Միայն 7 ամիս- անց նա կկարո-ղա-նա- ուշքի- գալ ու վերա-դառ-- նալ աշխատանքի: Կողքին հավաքված մարդկանց կասի, որ իրեն- տրվել է ապրե-լու- երկրորդ- շանս:

Մահից մազապուրծ լինելուց ավելի քան 30 տարի անց իր քաղաքական կենսագրության վայրիվերումների պատճա- ռով Ջո Բայդենն ամենայն հավանականությամբ պիտի որ շանս չունե-նար:- Բայց հենց այդպես- է ձևավոր-վել- նրա ամ- բողջ կյանքը՝ անհավանական շրջադարձեր, տպավորիչ հա- ջողություններ ու անմարդկային տանջանքներ: Ամերիկյան իշխանության ամենաբարձր դիրքերին հասնելու ձգտումը

Բայդենի կյանքում ավելի քան 50 տարվա պատմություն ունի: Երբ նա նոր էր չափահաս դառնում, նրա ընկերուհու (ավելի ուշ՝ առաջին կնոջ՝ Նեյլիա Հանթերի) մայրը նրան հարցրել էր մասնագիտական նպատակի մասին. «Նախագահ,– պատասխանել էր Բայդենն ու հավելել,– Միացյալ Նահանգների»:

Բայդենի քաղաքական կարիերան նրան դարձրել էր ամերիկյան ժամանակակից պատմության մեջ առանցքային իրադարձությունների մասնակից՝ ներառյալ ազգային կերպարը ձևավորող ռասայական, սեռական, առողջապահա- կան, կապիտալիստական, պատերազմական ու հանցա- վորության շուրջ ներքին բանավեճերի մի մասը: Նա գործել էր սխալներ,- ըն-դու-նել դրանք ու վճա-րել դրանց հա-մար: Նա կրկին ու կրկին շրջանցում էր կանխատեսումները, թե ինքը քաղաքականապես «ավարտված» է: Եվ նախագահական պատմական ընտրարշավի ժամանակ, ի զարմանս իրեն, հայտնվեց Բարաք Օբամայի կողքին: 2008-ին Դեմոկրատական կուսակցության Ազգային համագումարում իր ելույթում ասաց. «Կյանքի ինչ–որ փուլում ձախողումն անխուսափելի է, սակայն հանձնվելն աններելի է»:

Ստանձնելով քաղաքական կարիերայի առումով երկրի ամենաչարաբաստիկ՝ փոխնախագահի պաշտոնը, Բայդե- նը հաճախ թողնում էր այնպիսի մարդու տպավորություն, որը չէր հավատում իր բախտին: Կյանքի փորձությունները նրան ստիպել էին ազատվել որոշակի հանդիսավոր ինքնավստահությունից: Մի բրիտանացի նախարար Բայդենի հետ առանձնազրույցի ժամանակ հարցրել էր, թե արարողակար- գի տեսանկյունից ինչպես պետք է դիմել միմյանց: Թատերա- կան հայացք նետելով դատարկ սենյակին՝ Բայդենն ասել էր.